

ուր որ լինելու էք, դիմակ դրած գովելու էք մինչև ձեր յանդիմանութիւններ ստանալը, վա՛յ նրանց և քեզ համար։ Ասացէք, խնդրեմ, որտեղ, մատենի որ յօղուածում է գրուած ձեր տուած նբւերքը, որ խնացուի թէ արքայութիւն է գնում թէ դժոխք, կամ քանի սև կոպէկ գցած կար աջահամբոյր աջի համար և վերջապէս մէկ բանի համար մի սև կոպ. դո՛հած։ Թող ձեր խիղճը ձեզ տանջէ ներսումը եթէ կենդանի է։ Դուք չէք հասկանում այնքան տեղը, որ շատ ճշմարտութիւնների մէջ եթէ անձնական կիրք լինի խառնուրդ, կարող են եղած ճշմարտութիւններն էլ ստել։ Դուք բնաւ երեւակայում էք այն վանքի (մի 12—15 տարի առաջ) դուրսիւն. դանդաղում էր այն տեղ մի կտոր հաց, որ այն տեղով անցնողն վայելէր. դանդաղում էր մի բաժակ գինի. գտնվում էր գոնէ մի յարմար սենեակ բնակութեան համար. դու կարող էիր վանքի բակումը աներկիւղ օձերից և թունաւոր զեռուներից ման դալու կամ նստելու. դու տեսնէս բաց ի մօրենու թփերից մի տասը քսան խաղողի ծառ յարմար կանգնեցրած. եթէ հնձած հարած մտրնու թփերը և խոտեղեն անտառի պէս բարձրացրացած բանջարները վառելու ժամանակ այդու մէջ, որ բարեկանան կրակին էր նմանվում, տեսած լինէիք, և քանի մի յանդիմանութիւններ վերջին ժամանակներում ստացած չլինէիք, այն ժամանակ ձեր խիղճն էլ ձեզ թող չէր տալ զբաղարանու մէկին կամ միւսին։ Եթէ վանքի մուտքը իրա վերայ գործ չգնուէր, որտեղից կուներնար այն բաւական սենեակները, որոնց մէջ բնակվում են թէ հիւրեր թէ ուխտաւորներ և առաջնորդներ պառահած ժամանակու եթէ այդպիսի վերայ ամենայն տարի ծախս չլինէր, ի՞նչպէս կարող էր գոյութիւն ունենալ մինչև այժմ։ Մի թէ մոռացել էք Մէյսարու վանքը. ինչո՞ւ էր աւել նա սորանից մի տասն ու հինգ տարի առաջ։ Այդ վանքն էլ էիր գնացել, ի՞նչպէս տեսար, բաց ի ջղիկներ և թունաւոր զեռուների տեսնելուց նորա մի քանի աւերակ շէնքերի մէջ, ի՞նչ բաւականութիւններ էիր ստանում։ Ժամանակը այդ չէ պահանջում, սիրելի, որ դուք անձնական կիրք ունենայու պատճառաւ, մարդու աշխատանքը առ ոչ ինչ համարէք, փոխանակ գովելու քաջարկելու, պարտաւէք։ Չեզ ահա կարելի է դարձնել այն խօսքը թէ դարմանդ հարկաւոր չէ մարագը ածել, մարագին միայն թէ հասնու։

Ն. Ի.

Ի. Զատիկի.

ՀԱՇԻԻ ԾԽ. ՀՈԳ. ԴՊՐՈՑԻՆ

ՀԱՅՈՑ ՄՈՁԳՈՎՈՑ:

ԽճԻՒԳՐԱՆԻ ԱՐԱՐԱՐ ԱՏԱԳՐԱՅ.

Անցած Յունիսի վերջում շարունակ մի շարան հարցաքննութիւն էր մեր Ծխական — Հոգևոր Դպրոցում, իսկամիս 9 ին, անտեսական և ուսումնական մասանց հաշիւները ժողովրդին տալու համար, կատարվեցաւ ցոյցի հետեւեալ կարգաւ. 1) Ուսուցիչ Պ. Յովհաննէս Տէր — Մոսկէսեանը կարգաց ուսումնական մասի հաշիւը և հրաւիրեց այցելուներին մի ձեռաց հարցաքննութիւն անել աշակերտներին, որը կատարվելուց յետոյ ժողովուրդի ուշքը նա դարձրուց մի քանի մանկավարժական խնդիրների և ծնողների դպի ուսումնարանը և իրանց զաւակները ունեցած պարտքերի վերայ։ 2) Հոգաբարձութեան կողմից նորա Անդամ Պ. Պօղոս Հլթեանցը կարգաց անտեսական հաշիւը և վերջը մի քանի յորդորանք ուսումնարանին նկցուկ լինելու համար։ Այլ և յայտնեց, որ ուսումնարանին պատկանեալ՝ չորս Հոգաբարձուների 500 ական և եկեղեցական 6000 մանկեթով բացած, մոմաշինութեան գործարանը (սորա մասին մանրամասն տեղեկութիւնները առանձին յօղուածով կուղարկենք Երարատին) նորան մօտիկ ապագայում նիւթական ապահովութիւն է խոստանում։ 3) Ուսուցիչ Պ. Յովհաննէս Զիզեանեանցը կարգաց ծառ՝ նոր սերունդին ուրիշ ուսման հետ արուեստներ ևս սովորացնելու համար, և ընդ (Ուսուցիչների կարգածները կուղարկվին արարատին։ Եւ 4) Դպրոցի ամեն գործերին վերահասու Յովհաննէս աւագ քահանայն Խոսրովեանց յայտնեց Վեհափառ Աթոռիկոսի Առնդակը. որով յայտնում էր նորին Վեհափառութիւնը իւր օրհնութիւնը և գոհունակութիւնը Մոզրոկու Հայ հասարակութեանը և մանաւանդ Հոգաբարձութեանը, որ ջանք է անում նորին Օծութեան հիմնած Դպրոցը բարեխաւացնել, բաց անելով — վերջիշեալ մօմի գործարանը, որից դուրս եկած մոմեղեններից մի փոքր քանակութիւն վառուել է այս տարի Ս. Միլոնի օրհնութեան հանդիսում։ Վերջը նա հրաւիրեց ամենքին ոտքի կանգնել և աշակերտները նորա հետ միասին մաղթանք վերախնկեցին Աստուծոյ Օգոստոսափառ Այսեր, նորա ընտանեաց և Վեհափառ Աթոռիկոսի ու Հայ ազգի համար։ Աստի մանրամասն նկարագրութիւնները աւերորդ և անշահ համարելով՝ միայն պիտաւոր նիւթերը հաղորդում ենք և խնդրում հրատարակել նրանց։

Մարտ 18 71 թ. — Յունիսի Յունիս.

Ի. Կ.

Առ 1 Ն Յունիսի 1871 թ. պատրաստի փող կար

56 20 1/2

Տեղւոյս երեք եկեղեցիներից ստա- ցուել են	1600	
Գանձանակադրամք	28	56
Էջակերաններից վարձ	6	
Վաճառած գրքերի գին	51	20
Թիֆլիզից Պ. Գալիքի խառնու- ցի 1870 թ. ակտի ժամանակ ոտորա- դրած նուիրարերու թիւը ստացվե- ցաւ	25	
Հոգաբարձու Պ. Պօղոս Շլիման- ցի Մակարիայի տօնավաճառից բե- րած նուիրադրամք	70	
Հոգաբարձու Պ. Յարու թիւն Գան- ջումեանցի նոյնպէս Մակարիայից բե- րած նուիրադրամք	42	
Պ. Գալուստ Բօլուբաշեանցը նուի- րել է, իւր մի կրպակի մի տարվայ վարձը	120	

1998 96¹/₂

Նոյեմբեր 18 71¹/₂ — Յանւար 3 — 1872

Ու. Կ.

Ուսուցիչների և վերակացուի ոտնիկ Գպրոցի ծառային	1450	
Վառելաւիցայ (կէսը դալոց ձմեռ- վայ պաշարն է)	85	90
Ուսումնարանի շէնքումը նորոգու- թիւններ, յաւելումներ (վառարան- ներ և կրկին պատուհաններ, ելք)	161	4
Դասատան պիտոյքներ—սեղաններ, քանոններ, մեծ ջօթիկ, ելք	44	75
Թէ վաճառելու և թէ՛ ձրի բաժա- նելու գրքեր, քարտիկ ևն	143	25
Չրի բաժանած թուղթ, տախտակ, գրիչ, մատիտ և գրելու պիտոյքներ	56	30
Ուրիշ մանր մուր ծախքեր	21	39

1982 35

Հանելուկ Զախար Դոստոյեւսկի Դոստոյեւսկի 1 Ն

Յանւար 18 72¹/₃ — 16 ր. — 61²/₄

Այժմ Գպրոցը ունի 2 ուսուցիչ (կայ և եր-
րորդ ուսուցիչ — Բարեկրօն Գալուստ քահանայ
Թուանանանցը, որ ձրիարար՝ երգեցողութիւն է
սովորացնում պարագելով շարաթական 4 դաս),
որոնք միենոյն ժամանակ են վերակացուք (առան-
ձին վերակացու Մայիսից դէսը չեկայ) և 67 ա-
շակերտ, որոնք ամէնքը ձրիավարժ են և համա-
րեւս ամէնքը ձրիարար ստացել են Գպրոցից բո-
լոր ուսանելու պէտքերը:

Աշակերտները զետեղուած են 2. դասատան
մէջ, և իւրաքանչիւրումը կայ 2 բաժանմունք:

Ա. Դասատանը սովորում են Կրօն, Հայերէն
և Ռուսերէն կարգալ — գրել, Թուարանութիւն

և երգեցողութիւն. իսկ Բ. ումը — Կրօն, Սրբադ.,
պատմութիւն, Հայոց և Ռուսաց լեզուք՝ իւրեանց
վայելչագրութիւնովք, թուարանութիւն, աշխար-
հագրութիւն, Հայոց պատմութիւն և եկեղեցա-
կան ու ժողովրդական երգեցողութիւն:

Թէ՛ դասատուութիւն եղանակները և թէ՛ դա-
սական ձեռնարկները ամենանորերն են (հնչական
ոճ, բացատրական ընթերցանութիւն, հայեցողա-
կան ուսումնաստուութիւն, Գրութիւն ոճը, աշխար-
հաբառ քերականութիւն, ևն)

Տեղւոյս Հայ ընթերցասիրաց ընկերութեան
գրքերը և պարբերական հրատարակութիւնները
պահպում են Գպրոցումը, սրանց մէջ կան ման-
կավարժականներ էլ, որոնք ուսուցիչներին մեծա-
պէս օգնում են:

Մարմնամարզութիւնը գործիքների քիչութեան
պատճառաւ կանոնաւոր չէ մտած. երբեմն երբեմն
աշակերտները մարզվել են առանց գործիքների
Շրթերի տանու — թշկական Գիմնաստիկայի հա-
մաձայն, Հոգաբարձութիւնը մտածում է այս բա-
նը կանոնաւոր կերպով մտցնել:

Իւրաքանչիւր Հոգաբարձու, բացի խորհուրդի
օրերից, մի մի շաբաթ հերթակալութիւն է ա-
նում, որի պարաքն է ամենայն օր Գպրոց դալ և
իւր դիտողութիւնները արձանագրել նորա համար
նշանակուած առանձին մատնանում Այս մատնա-
նից երեւում է որ համարեւ թէ ամենայն օր մէկ
հոգաբարձու այցելութիւն է արել Գպրոցին՝ բացի
խորհուրդի դէպքերից, երբ ամէնքն են ժողովուել:

Նմիտող ուսումնական տարում ուսուցիչներից
ո՛չ մէկն էլ ո՛չ մի դաս չէ բաց թողել:

Աշակերտները իւրաքանչիւր օր մնում են Դպ-
րոցում շաբաթական 6 ժամ և պարագում 5 դաս.
պարագումները կարճ օրերին սկսվում է 8 ժամից,
իսկ երկուր օրերին — 7 — ից: Այս տարի ուսուցչի
պակասութեան պատճառով ուսումը սկսվել է
Հոկտեմբերից և շաբաթականով մինչև Յունիսի
17 — ր բոլոր կարգալու օրերի գումարը, բացի կի-
րականներից և տօններից, է 182: Աշակերտների բաց
թողած բոլոր օրերը գումարելով և բաժանելով
միայն բացակայ եղողների թաւի վերայ՝ երեւում
է, որ իւրաքանչիւրը նրանցից, միջին թուով, բա-
ցակայ է գտնուել մօտ 17¹/₂ օր: Այս ցուցիկ իրո-
յութեան մասին Ուսումնարանի վարչութիւնը միշտ
հոգում է:

Հոգաբարձու Պ. Պօղոս Շլիմանցը այս տարի
5 էքսուր աշակերտի տուել է բոլոր եղանակների
համար հագնելիք, որոնց գինն է մօտ 100 մա-
նէթ. — նոյնպէս Հոգաբարձու Պ. Մակար Ուլու-
խանանցը ընծայել է 1 թօփ ձօթ, որից 12 աշա-
կերտի ամսուվայ չօր է կարուել: Հոգաբարձու
Պ. Յարութիւն Գանջումեանցն էլ նուիրել է մէկ
մարմնամարզական գործիք:

Իւրաքանչիւր Հոգաբարձուի յանձնած է մի մի
ժապաւիննալ մատնան մատնաւոր զոհարերու-

